«Եկե՛ք ինձ, բոլոր հոգնածներ ու բեռնավորվածներ»։

Մատթեոս 11:28

ԲԱՐԻ ԼՈՒՐ

Փետրվար 2026, N2 (177)

ՍԱՐԴԸ ՊԵՏՔ Է ԵՐԿՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԻ

ԻՆՉՊԻՍԻ՞Ն Է ՔՈ ԱՊԱԳԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԱՎԱՏՔԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ

ԲԱՐԻ ԼՈՒՐ

ԱՄՍԱԳԻՐ

Փետրվար 2026թ., N2 (177)

Լույս է տեսնում 2009թ. մայիսից

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ ԿԱՐԴԱՑԵ՛Ք

Հրայր Ամիրբեկյան

Մարդը պետք է երկու ընտրություն կատարի 1

Ինչպիսին է քո ապագան 5

Ձեզ պետք չէ ո՛չ քիմիաթերապիա, ո՛չ ճառագայթային թերապիա, ո՛չ վիրահատություն... 9

Սուսան քրոջ վկայությունը 12

17-ամյա դպրոցականի երազը 14

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք աղոթել, որ թերթի միջոցով տարածվի Ավետարանի Բարի Լուրը, ու ցանվեն Ճշմարտության սերմերը, որպեսզի մարդիկ դառնան Աստծուն և Հավիտենական Կյանք ունենան:

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք ձեր դիտողությունները, առաջարկությունները ու նվիրատվությունները ուղարկել խմբագրություն: Մենք սիրով հաշվի կառնենք ձեր արձագանքները: Էլ. հասցե՝ info@barilur.org

ՄԱՐԴԸ ՊԵՏՔ Է ԵՐԿՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԻ

Երկրորդ Օրինաց գրքում գրված է. *«Նայէ, ես այսօր կեանքը ու բարին, մահը ու չարը քու առջեւդ դրի»* ***(30:15):*** Այստեղ Աստված մարդուն տալիս է առաջին ընտրության հնարավորությունը՝ ընտրելու կյանքն ու բարին, իսկ հետո նաև երկրորդը՝ *«Այսօր երկինքը ու երկիրը վկայ կը բռնեմ ձեզի, որ կեանքը ընտրէ որպէս զի ապրիս դուն և քու սերունդդ»,* այսինքն՝ անհրաժեշտ է ընտրություն կատարել կյանքի ու մահվան միջև **(30:19):**

Սիրելի՛ ժողովուրդ, ուզում եմ տեղեկացնել, որ հունարեն բնագրում հնչած հոմանիշներ կան, որոնք հայերենում թարգմանվում են նույն բառով, որը տարբեր իմաստներով է օգտագործվում. օրինակ՝ Սուրբ Գրքի հունարեն բնագրում «կյանք» բառը արտահայտվում է մի քանի բառով՝ աստվածային կյանքը մի բառով, մարդկային կյանքը՝ մեկ այլ բառով, կենդանունը՝ մեկ այլ: Բայց հայերենում այդ երեք բառերը թարգմանվում են միևնույն բառով: Նույնը կարելի է ասել «սեր» բառի մասին: Այդպես էլ՝ «բարի»... ի՞նչ է նշանակում բարի կամ բարություն...

Գիտենք, որ Սուրբ Գիրքն ասում է՝ Ադամի ստեղծվելը բարի էր: Աստված չար բան չէր կարող ստեղծել: Հետագայում, երբ Ադամը մեղք գործեց, նրա մեջ եղած բարությունն աղավաղվեց, դարձավ մեղքին զերի, բայց չզրոյացավ: Սակայն այն բարությունը, որն Աստծուց է գալիս, բոլորովին ուրիշ բան է, դրա համար էլ, երբ Հիսուսին անվանեցին «բարի վարդապետ», Նա պատասխանեց. *«Եւ անիկա ըսաւ անոր, Ինչո՞ւ զիս բարի կ՚անուանես. մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած»* ***(Մատթ. 19:17):*** Այսինքն՝ այն բարությունը, որը գալիս է մարդկային բնության մեջ բարության մնացորդից, թրվում է, թե այն կատարելով՝ մարդը կատարում է Աստծու կամքը: Օրինակ՝ մարդուց լսում ես, որ ասում է, թե ինքը մեկի՛ն չարիք չի կամենում, ձեռքից եկածով օգ-

նում է, երբ չար բանն էլ տեսնում է՝ դուրը չի գալիս: Ստացվում է, որ այդ մարդը բարին է ընտրել: Բայց եկե՛ք դա դիտենք մի օրինակի վրա. երբ մարդիկ իրենց կյանքերը վտանգելով հեղափոխություն էին անում, որպեսզի խեղճերն ու հարստահարվածներն էլ լավ կյանքով ապրեն, արդյո՞ք դա վատ էր: Բայց առաքյալն ասում է, որ երբ մեղքի բնությունն ու մարդու մեջ մնացած այդ բարու մնացորդը պատերազմում են, մարդկային բարին դառնում է մեղքի բնության ստրուկը: Եվ սա մարդկանց շփոթմունքի մեջ է գցում. «...ա՛յ, էս մարդն էնքան լավ, բարի մարդ է, որ նույնիսկ մի ճանճ էլ չի սատկացրել, սրան մնում է միայն աղոթել, ու կդառնա քրիստոնյա»:

Սիրելինե՛ր, ժողովրդական մի ասացվածք կա, որն ասում է. «Երբ մարդը ելնում է ձիուն՝ հավատքն ուրանում է»: Սուրբ Գիրքը մեզ ասում է, որ Կոռնելիոսը բարեպաշտ ու աստվածավախ, իսրայելացիներին շատ ողորմություններ տվող մեկն էր, բայց որպեսզի հոգևոր տեսակետից Աստծու ուզած վիճակի մեջ գար, պետք է կյանքի ընտրություն աներ: Եվ երբ նա հանդիպեց Պետրոս առաքյալին, իր կյանքում կատարեց երկրորդ ընտրությունը՝ ոչ միայն բարու և չարի միջև, այլ նաև կյանքի ու մահվան միջև, և Կոռնելիոսն ընտրեց Աստծու սերը՝ որպես իրեն կյանք:

Ժողովո՛ւրդ ջան, երբեմն լսում ենք, որ ասում են, թե՝ աշխարհի բոլոր կրոններն էլ նույն բարությունն են քարոզում: Դա այդպես չէ. այն բարությունը, որն Աստծուց չի բխում, զուտ մարդկային բնության մեջ բարությունից մնացած տարրերի դրսևորումն է: Այդ մարդկային բարությունը մարդիկ դարձնում են լոզունգ, դարձնում են դրոշակ: Ժողովուրդը մի առակ է պատմում, թե ինչպես մի յոթ գլխանի հրեշ նստում է ջրի ակունքին ու չի թողնում, որ ժողովուրդն օգտվի ջրից: Գալիս է մի քաջ երիտասարդ տղա, մենամարտում հրեշի հետ ու հաղթում նրան: Ժողովուրդը երկար սպասում է նրան, բայց տղան դուրս չի գալիս: Հետո իմանում են, որ տղան ինքն ավելի սարսափելի հրեշ է դարձել, քան նախորդն էր: Այսինքն՝ մեկը կարող է քննադատել իշխանություններին, բայց երբ ինքն է գալիս իշխանության, դառնում է ավելի վատ ղեկավար, քան նախորդ-

ներն էին, որոնց քննադատում էր: Ուրեմն ի՞նչ է կատարվում. մեղքի բնությունը, բախվելով մարդկային բնության մեջ մնացած բարության տարրերին, հաղթում և ստրկացնում է նրան: Այդ նույն բանն էին փորձում անել կոմունիստները, երբ մանուկ հասակից դաստիարակում էին երեխաներին այնպես, որ նրանց մեջ եղած բարության տարրը զարգանա և հաղթի մեղքի բնությանը, որ մարդն իր շահը ցածր դասի հասարակության շահից:

Սիրելինե՛ր, սատանան մարդկանց խաբելու բազում միջոցներ ունի, և դրանցից մեկն էլ այն է, որ սևը ներկայացնում է սպիտակ, իսկ սպիտակը՝ սև: Կամ՝ ասված է, չէ՞, որ ինքը լուսո հրեշտակի կերպարանք է առնում: Այսինքն՝ մարդուն համոզում է, որ՝ դու ոչ մի վատ բան չես արել, ուրեմն բարի մարդ ես, ընտրել ես բարին, քեզ այլ բան պետք չէ:

Մի տատիկի հետ զրուցելիս նա ասաց. «Կյանքումս անբարոյականություն չեմ արել, ոչ մեկին չեմ դավաճանել, և այլն, և այլն: Եվ եթե ես դրախտ չգնամ, ուրեմն դրախտը դատարկ կմնա»: Բայց եթե նրան մի փոքր պաշտոն տային, մի փոքր դիրք, մի փոքր հարստություն՝ նրա մեղքի բընությունը կբախվեր իր ներսում մնացած բարության տարրերին, և ինչպես կասեր բանաստեղծներից մեկը՝ երբ մեր ազնվությունը բախվում է մեր էգոիզմի հետ, փշուր-փշուր է լինում հախճապակու նման: Մարդն ինքն իրեն համոզում է, որ իր խոսքերն ու գործերը աստվածային կյանքից են բխում, ու չի ցանկանում հասկանալ, որ ինքն Աստծու հետ ընդհանրապես կապ չունի, Քրիստոսը իր մեջ չի ծնվել, և ինչպես Պետրոս առաքյալն էր ասում. *«Որոնցմով ամենամեծ ու պատուական խոստմունքներ տրուած են մեզի, որպէս զի ասոնցմով աստուածային բնութեանը հաղորդ ըլլաք՝ աշխարհի մէջ ցանկութենէ յառաջ եկած ապականութենէն փախչելով»* ***(Բ Պետ. 1:4):*** Մարդու մեջ այդ աստվածային բնությունը չկա, և մարդը դա չի նկատում, որովհետև սատանան այն սվաղում է՝ ասելով. «Տե՛ս, դու բարի մարդ ես, բարին ես ընտրել, ոչ մեկին վատություն չես անում: Քեզ համար էլ խնդիր չկա»: Մի եղբայր ասում էր, որ դժոխքի ճանապարհը սալահատակված է բարի նպատակներով: Քա՛վ լիցի,

մենք չենք ասում, որ բարի բաներ անել չի կարելի, այն անհրաժե՛շտ է անել, բայց այն պետք է բխի մեր մեջ գոյություն ունեցող աստվածային կյանքից, որ եթե մեր էգոիզմի հետ պատերազմ առաջանա, Քրիստոսը հաղթի: Քանզի ժամանակ պիտի գա, որ այդ բարությունն այլևս չեն անելու, քանի որ գրված է. *«Եւ զայս գիտցիր որ վերջին օրերը չար ժամանակներ պիտի գան. վասն զի մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողներու անհնազանդ, ապերախտ, անսուրբ, անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, դաժանաբարոյ, բարին չսիրող, մատնիչ, յանդուգն, գոռոզ, աւելի հեշտասէր քան թէ աստուածասէր. որոնք աստուածպաշտութեան կերպարանքը ունին, բայց անոր զօրութիւնը ուրացած են. և դուն ասոնցմէ մէկդի կեցիր»* ***(Բ Տիմ 3:1-5):*** Սա, իհարկե շատ վատ ժամանակ կլինի, քանի որ այն առաջին ընտրությունն էլ կթողնեն, կլինեն բարին չսիրող:

Երբ մեղավոր կնոջը բերեցին Հիսուսի մոտ, ոչ թե արդարություն էին ցանկանում իրականացնել, այլ Հիսուսի դեմ բան էին փնտրում. եթե ասեր քարկոծե՛ք՝ դեմ կլիներ Իր ուսմունքին, իսկ եթե ասեր մի՛ քարկոծեք՝ Մովսեսի օրենքին: Այդ ամբոխում գըտնըվողները կյանքը մերժած մարդիկ էին, ուզում էին աստվածային կյանքը խաչը հանել, բայց խղճմտանք ունեին, որովհետև իրենց խղճից հանդիմանվելով՝ թողեցին հեռացան: Մենք ավելի լուրջ բան ենք քարոզում, քան մարդու բնության մեջ եղած բարության տարրերը, մենք խոսում ենք բացարձակ ուրիշ բընության մասին, որի մասին պատարագի մեջ ասվում է. «Եվ իջեալ ի երկնէ և բաշխի ի միջի մերո», որ Հիսուսն ասում է. *«Ես կանգնած եմ քո սրտի դռանը և թակում եմ, որ դու բացես և ես ներս մտնեմ»:* Ոչ թե քո մեջ եղած խիղճն ու բարությունը կզարգացնեմ, այլ՝ Աստծու էությունը, Նրա բնությունը կփոխանցեմ քեզ:

Սա շատ լուրջ բան է, սա Ավետարանի հիմքն է, Քրիստոսի խորհուրդը՝ Քրիստոս ի մէջ մեր հայտնվեցավ: Անօրենն ամեն բան անում է, որ Քրիստոս մեր մեջ չծնվի, եթե ծնվել էլ է՝ մեռնի, իսկ մենք ամեն ինչ պետք է անենք, որ Քրիստոսը մեր մեջ ծնվի, և եթե ծնված է, ապա Նրա հարության զորությունը, Սուրբ

Հոգու լեցունությունը՝ Աստվածային բնության կատարյալ լեցունությունը և շնորհքի ճոխանալը մենք ամեն օր ճաշակենք:

Սիրելի՛ս, եթե դու դեռ չես կատարել քո ընտրությունը, ուրեմն մի՛ ուշացրու, ընտրի՛ր կյանքը՝ Քրիստոսին, որ քո անունը գրվի Կենաց գրքի մեջ, ու հավիտենական կյանք ունենաս:

Հրայր Ամիրբեկյան

ԻՆՉՊԻՍԻ՞Ն Է ՔՈ ԱՊԱԳԱՆ

Ցանկանում եմ ձեզ հետ կիսվել մի ուղերձով, որն այսօր դրված է սրտիս՝ մեր ծառայությունների անհեռանկարության մասին: Այդ իրավիճակն ուզում եմ քննենք մի անձնավորության օրինակով, որը մեր տեսանկյունից հերոս է, բայց իրականում, եթե փորձենք մտնել նրա մաշկի մեջ և անցնել նրա կյանքի ճանապարհով, չենք դիմանա: Մենք հաճախ ենք վերլուծում ինչ-որ մեկի անցած ուղին... բայց իզուր է դա, եթե չենք պատրաստվում անցնել նրա անցած ճանապարհով:

Կարդանք Ա Թագավորաց գրքի 3-րդ գլուխը: Այս ամենի նախապատմությունն այն է, որ Աննան զավակ չէր ունենում: Նա աղոթեց Տիրոջն ու ասաց. *«Ո՛վ Տէր զօրութեանց, եթէ քու աղախինիդ նեղութեանը նայիս ու զիս յիշես, և քու աղախինիդ չմոռնալով՝ քու աղախինիդ արու զաւակ մը տաս, զանիկա Տէրոջը պիտի նուիրեմ իր կեանքին բոլոր օրերուն մէջ, ու անոր գլխուն վրայ ածելի պիտի չելլէ»:* Տերն ընդունեց նրա աղոթքն ու Աննային մի որդի պարգևեց: Քանի որ նա խոստացել էր մանուկը նվիրել Տիրոջը ծառայելու՝ այդպես էլ արեց. *«Եւ Սամուէլ մանուկը Հեղիի առջև Տէրոջը ծառայութիւն կ'ընէր»:* Մենք ի՞նչ գիտենք Սամուէլի մասին. նա մարգարե էր, դատավոր, քահանայապետ... բայց մոռանում ենք, որ կրծքից կտրվելուց հետո մայրը նրան հանձնել էր Հեղի քահանային՝ իր խոստման համեմատ, և տարին մեկ անգամ էր այցելում նրան ու նոր հագուստ տանում: Սամու-

ելից առաջ այդպիսի ծառայություն արել է Մովսեսը: Սամուէլից հետո ծառայությունը բաժանվեց թագավորների, քահանաների և մարգարեների միջև:

Սամուէլը նույնիսկ ղևտացի չէր, նա իրավունք չուներ քահանայություն անելու, բայց նա իր մանկության բոլոր օրերը ապրեց իր ծնողներից զատված՝ արդեն ծեր, համարյա խուլ ու կույր մի ծերունու հետ, որի խոսքերը նույնիսկ իր սեփական որդիները բանի տեղ չէին դնում: Բայց նա ծառայում էր Հեղիին ոչ թե պարտադարաբար, այլ ջանադրաբար ու հոժարակամ:

Պատկերացրե՛ք, որ դուք պառկել եք, արդեն նիրհում եք, ու հանկարծ լսում եք, որ կանչում են ձեր անունը: Սամուելն առանց հապաղելու վազեց Հեղիի մոտ ու ասաց. «Ահա՛ հոս եմ. քանզի զիս կանչեցիր»: Երբ մտածում ենք, թե ինչպես պետք է ծառայենք մեր ծնողներին, ավագ սերնդի մեր քույրերին ու եղբայրներին՝ հիշենք Սամուէլին, որ ծառայում էր ջանադրաբար ու հոժարակամ: Սամուելը հոգևոր որևէ աստիճանի հասնելու կամ առաջ քաշվելու ոչ մի հեռանկար չուներ, բայց այդ զառամյալ ծերունուն ծառայում էր հոգատարությամբ ու հավատարմությամբ: Այս ամենի հետ պետք է նշենք, որ նա խոստման որդի էր, և քանի որ հավատարիմ մնաց քչի մեջ՝ ստացավ ավելին:

Սիրելինե՛ր, շատ կարևոր է հարգանքը, ակնածանքը, ճիշտ վերաբերմունքը,որովհետև Աստված ուշադրություն է դարձնում այդ ամենին: Այդ էր պատճառը, որ Աստված հայտնեց Սամուելին Հեղիի ընտանիքի մասին Իր ծրագիրը: Եթե դու չունես հոգևոր այն վիճակը, որ հետագայում չծաղրես, չանարգես ու չտարածես մերձավորիդ մասին հայտնըվածը, Աստված քեզ չի հայտնի Իր ծրագրերը: Բայց պատանի Սամուելի սիրտը այնքան մեծ էր, որ կարողանում էր պահել այնտեղ այդ ամբարտավան Ոփնիի ու Փենեհեսի պատիժը, և Աստված այն տեսնում էր ու օգտագործում Սամուելին, որպեսզի Իր Խոսքը հայտնի Հեղիին:

Մի անգամ ես ու հայրս իրարից նեղացանք: Մենք ապրում էինք նույն տան մեջ, միասին ճաշում էինք, զրուցում և նույնիսկ միասին աշխատում... Թվում էր, թե ամեն բան լավ է, բայց ես իմ սրտում գիտեի, որ նրանից նեղացել եմ, նա էլ գիտեր, որ իր ներսում իմ դեմ ինչ-որ բան ունի:

Ես մտածում էի, որ ժամանակի ընթացքում ամեն բան կմոռացվի, կանցնի: Մի շատ սովորական աշխատանքային օր ինձ մոտեցավ մեր վարորդներից մեկը և ասաց.

- Լսի՛ր, Միքո՛, ինձ շտապ գումար է պետք:

- Գիտես՝ էսօր ես շատ վճարումներ ունեմ անելու, եթե կա մեկը, ումից կարող ես վերցնել՝ դիմի՛ր նրան: Ես քո աշխատավարձը կտամ, բայց ավելին չեմ կարող:

- Դե, ես հենց այնպես ասացի, իհա՛րկե կան մարդիկ, ումից կարող եմ վերցնել,- պատասխանեց Օլեգը:

- Դե, ավելի լավ, երբ վերադառնաս՝ աշխատավարձդ կըտամ:

Ժամը մեկի կողմերն էր, ու ինձ շատ պարզ մի միտք հայտնվեց՝ «Հաշտվի՛ր հորդ հետ»: Սուրբ Հոգին սկսեց ինձ այնպես ճնշել, որ ես վեր կացա տեղիցս, գնացի ավտոկայանատեղի, ուր աշխատում էր հայրս, մոտեցա նրան, գրկեցի և ասացի,

- Պա՛պ ջան, ների՛ր ինձ:

Մինչ այս դեպքը ես նրանից ներողություն խնդրել էի, բայց այդ ժամանակվա իմ արածը ոչ թե ներողություն խնդրել էր, այլ՝ գիրը կատարել, որից հետո հայրս ավելի էր նեղացել ինձանից: Իսկ այժմ ես ուղղակի անկեղծ ներողություն խնդրեցի: Երբ ետ դարձա, Սուրբ Հոգին ինձ այցելեց ու շատ պարզ ասաց. «Գնա՛, հաշվի՛ր գումարը, որը պետք էր Օլեգին»: Տիրոջ կամքի կատարումը ինձ համար անխախտ է, հատկապես, երբ խոսքը վերաբերում է գումարին: Երբ Օլեգը եկավ, ես նրան մեկնեցի իր այդ ամսվա աշխատավարձն ու այն գումարը, որն իրեն պետք էր: Օլեգն սկսեց ցնցվելով լացել, գրկեց ինձ ու համբուրեց: Ես մտածեցի. «Դե, հավատացյալ ծնողներ ունի, երևի դրա համար է համբուրում», և այդ պահին Հոգին ասաց. «Ասա՛, որ դա Իմ կողմից է»:

- Օլե՛գ,- ասացի նրան,- ինչո՞ւ ես ինձ համբուրում, ես ընդհանրապես քեզ գումար տալու միտք չունեի, դա Տերն իմ սրտում դրեց, որ քեզ գումար տամ:

Նա սկսեց հոնգուր-հոնգուր լացել և ասաց.

- Չես հավատա, բայց ես բոլորին, ում կարող էի, զանգել եմ՝ բոլորը մերժել են: Մեքենայի մեջ ետ գալիս ուղղակի խոսում էի ու ասում. «Տե՛ր, խնդրում եմ,

օգնի՛ր ինձ»: Դա ժամը մեկին մոտ էր:

Օլեգը մինչ օրս էլ Տիրոջը չի եկել, նա գիտի, որ Աստված կա, հավատում է... բայց հարցը դա չէ, ինձ պետք էր հորս հետ հաշտվել, պատվել նրան, լուծել վիրավորվելու հարցը...

Իսկ հիմա պատկերացրե՛ք մեկին, որ գտնվում է այնպիսի ագրեսիվ միջավայրում, որտեղ չեն լսում հոր խոսքը, իրենց արարքներով անարգանք են բերում նրա անունին, և այդտեղ կա մեկը, որն այդ մարդու հարազատը չէ, բայց սիրով ու հավատարմությամբ լսում ու կատարում է նրա խոսքը: Տեսնելով Սամուելի վարքը՝ Աստված սիրեց նրան, ընտրեց ու գնահատեց և տվեց նրան Հեղիի ու նրա որդիների պաշտոնը Իր տան մեջ:

Սիրելի՛ երիտասարդներ, մարդն անցողիկ է, ու նրա իշխանությունը՝ վաղանցիկ, իսկ Աստված հավիտենական է, Նրա իշխանությունը՝ արդար ու անխախտ: Ինձ համար միևնույնն է, թե ո՛վ ո՛ւմ որդին է, քանի որ ես հաստատ գիտեմ, որ երկնքում ես Հայր ունեմ, Ով տեսնում է, որ ես դրսևորում եմ Իր բնությունն իմ կյանքում՝ հարգում եմ ծնողներիս ու ինձանից մեծերին: Որտեղ էլ դուք հայտնվեք, ինչ վատ շրջապատում էլ լինեք, հարգա՛նք դրսևորեք, ու դա արեք ոչ թե ուղղակի անելու համար, այլ՝ ջանասիրաբար, հոգատարությամբ և հավատարմորեն: Երբեք մի՛ ասեք. «Իսկ ինչո՞ւ ես, թող ուրիշ մեկը անի», որովհետև դու լսեցիր, դու հասկացար, դու կանչված ես ու պետք է անես, իսկ մնացածը թող Աստծուն: Գուցե մենք փնթփնթանք, թե՝ նա լավ չի լսում, կամ տեսնում, կամ չի հասկանում, բայց նա ունի այն, ինչը դու չունես... Սամուելը լսում էր Տիրոջ ձայնը, բայց չէր զանազանում, Հեղին արդեն չէր լսում Տիրոջ ձայնը, բայց ուներ փորձ, ինչը թույլ էր տալիս նրան հասկանալ, որ Աստված է խոսում: Եթե այս երկու սերունդը իրար հետ չշփվեին, պատանի Սամուելը չէր իմանա, որ խոսողը Աստված է:

Հարգե՛ք ավագ սերնդի ներկայացուցիչներին, նրանց նկատմամբ ձեր դրսևորած հարգանքն ու սերը ձեր գլխին թափվող օրհնություններ են:

Միքայել Խաչատրյան
(Չիտա)

Ձեզ պետք չէ ո՛չ քիմիաթերապիա, ո՛չ Ճառագայթային թերապիա, ո՛չ վիրահատություն...

Սիրելի՛ ժողովուրդ, մենք պետք է Աստծուն փառք տանք մեր կյանքի ամեն վայրկյանի համար: Մենք առանց Աստծու ոչինչ չենք կարող անել:

Ապրել եմ անաստված կյանքով, ունեցել եմ մի քանի դատվածություն: Երբ արդեն ազատության մեջ էի, բոլորը ինձնից երես էին թեքել. հարազատներ չկային շուրջս, միայն հակառակորդն էր մնացել կողքիս. նա ինձ մատուցում էր գումար՝ «ուրախ» կյանքի համար, նաև համապատասխան շրջապատ... Ես տրվեցի խմիչքին: Ժամանակ անց, փառք Աստծու, տեղեկացա Բարանովիչի վերականգնողական կենտրոնի մասին ու գնացի: Այդտեղ մարդիկ աղոթում էին, եկեղեցի էին հաճախում: Ես լսում էի նրանց: Առողջական խնդիր ունեի. ձայնս խզված էր այն աստիճան, որ հազիվ էի բառերն արտաբերում: Մեր ավագ եղբայրն ինձ տարավ հիվանդանոց: Հետազոտումից պարզվեց, որ պետք է շտապ բիոպսիա անել. կասկածում էին չարորակ ուռուցք ու չէին սխալվել: Վերադարձա վերականգնողական կենտրոն, պատմեցի եղբայրներին: Գիտակցում էի, թե ինձ ինչ է սպասվում: Մայրս էլ էր մահացել քաղցկեղից, շատ հարազատներ՝ ևս: Եղբայրներն ասացին՝ կաղոթենք: Եվ աղոթում էին մշտապես:

Բիոպսիայից տասը օր հետո պատասխանն ստացա՝ կոկորդի քաղցկեղ: Վերադարձա կենտրոն: Ինձ հաշվառման վերցրին ուռուցքաբանականում, բայց ուղարկեցին Բրեստ՝ կրկնակի հետազոտության: Այնտեղ էլ հաստատվեց նույն ախտորոշումը: Ըստ անալիզների արդյունքի՝ ես պետք է կա՛մ վիրահատվեի Բրավլյաններում, կա՛մ քիմիաթերապիա ընդունեի Բրեստում,

կա՛մ էլ ճառագայթային բուժում՝ Բարանովիչում:

Ախտորոշումից երկուսուկես ամիս էր անցել: Նորից ուղարկեցին Բրեստ՝ ևս մեկ անգամ բուժզննում անցնելու: Ասեմ, որ այդ ընթացքում ընդհանրապես ոչ մի դեղահաբ, ոչ մի ներարկում, ոչ մի բուժում չեմ ընդունել: Ինձ տարան հետազոտման սենյակ: Նայեցի՛ն, նայեցին, ապա ինձ դուրս հրավիրեցին: Բժիշկները հերթով սկսեցին գալ հետազոտման սենյակ: Կարծես կոնսիլիում հրավիրած լինեին: Որոշ ժամանակ հետո հրավիրեցին նաև ինձ: Ներս մտա ու փորձեցի իմ կարծիքը հայտնել նրանց.

- Լավ կլիներ՝ Բրեստում ճառագայթային բուժում ընդունեի, որովհետև վիրահատությունը կամ քիմիան երևի չեմ հաղթահարի:

- Սպասե՛ք, սպասե՛ք,- ասացին,- մենք չգիտենք՝ ինչ է կատարվել: Ձեզ հետազոտել ենք երկու ամիս առաջ, բայց հիմա չենք տեսնում ո՛չ վիրահատության, ո՛չ քիմիաթերապիայի, ո՛չ էլ ճառագայթային բուժման անհրաժեշտություն:

- Ի՞նչ է կատարվել,- հարցրի շփոթված:

- Ձեր կոկորդը մաքուր է, քաղցկեղ չկա: Բայց մենք պետք է դրանում համոզվենք. նորից պետք է բիոպսիա անել:

Ես վերադարձա վերականգնողական կենտրոն, լուրը հայտնեցի եղբայրներին: Ինձ հետ մեկտեղ եղբայրներն ուրախացան, փառաբանեցինք Տիրոջը: Նորից գնացի հիվանդանոց՝ բիոպսիայի: Բայց չէի կասկածում, համոզված էի, որ Աստված ինձ հետ հրաշք է կատարել:

- Իվա՛ն, Աստծու հետ պետք է անկեղծ լինես,- ասել էին ինձ եղբայրները առաջին իսկ օրը, երբ մտել էի կենտրոն,- եթե դու ինչ-որ բանի չես հավատում, անկեղծ ասա՛ Տիրոջը: Եթե ինչ-որ բան չես հասկանում, այդպե՛ս էլ ասա՝ չեմ հասկանում: Եթե դու Իրե՛ն չես հավատում, էլի անկեղծ ասա՛ Տիրոջը: Աստծու

հետ եղի՛ր անկեղծ, որովհետև անկեղծների հետ է Աստված անկեղծ վարվում։

Ես էլ, իրո՛ք, անկեղծ խոսում էի Աստծու հետ՝ ինչպե՞ս կարող է ջուրը գինի դառնալ, ի ծնե կույրը՝ տեսողություն ստանալ... Աստված ինձ պատասխանեց՝ այս մահացու հիվանդությունը թույլ տալով. « Իսկ հնարավո՞ր է, որ անբուժելի հիվանդությունը բուժվի»։

Փառք Տիրոջը։ Տասը օրն անցավ։ Բիոպսիայի պատասխանով ներս մտավ բժիշկս.

- Դե ի՛նչ, Իվա՛ն Վալենտինովիչ, Ձեզ միայն կարող եմ շնորհավորել։

- Ի՞նչ առիթով։

- Ձեր կոկորդը մանկան կոկորդի պես առողջ է, ուռուցքի հետքն անգամ չկա։

- Տվել է մեկը, թո՛ղ մյուսն էլ տա,- համարձակություն գտա ասելու,- թո՛ղ ձայնս էլ բուժվի. այն դեռ խզված էր այն աստիճան, որ մարդկանց գրեթե անլսելի էր։ - Ես ինչպե՞ս խոսեմ մարդկանց հետ։

- Մարդիկ տարօրինակ են,- զարմանքով խոսեց բժիշկս,- քաղցկեղից բժշկել է, մահացու հիվանդությունից ազատել է, հիմա էլ ուզում է՝ ձայնը վերականգնվի։ Թո՛ղ դա, դա քեզ չի խանգարի։ Փա՛ռք տուր Աստծուն, որ քաղցկեղ չունես։

Վերադարձա կենտրոն։ Ասեմ, որ երաժշտական դպրոց եմ հաճախել, լավ լսողություն ունեմ հիմա էլ ու միշտ շատ եմ սիրել երգել։ Ու երբ քույրերը, եղբայրները երգում էին, շատ էի ուզում, որ ես էլ երգեի։ Գիրքը բացում էի, նրանց հետ երգում էի՝ միայն թե մտքում, որովհետև եթե ձայնով երգեի, այն բոլորովին կկորչեր։ Հաջորդ առավոտ վեր կացա, ներսս ինչ-որ ձայն ասում է՝ իսկ ինչո՞ւ եղբայրներիդ չես ողջունում։ Ես նայեցի շուրջը.

- Բարի լո՛ւյս, եղբայրնե՛ր,- ողջունեցի բարձր ու մաքուր ձայնով։

Բոլորը զարմացած նայեցին ինձ՝ խոսո՞ւմ ես։

Հետո, երբ երգում էին, ես էլ սկսեցի երգել, ու իմ ձայնը հնչում էր բոլորից բարձր։

Սիրելինե՛ր, այս հրաշքը կատարվեց ամենքի աչքի առջև, ու ես պատրաստ եմ այն վկայելու ողջ աշխարհին։ Փա՛ռք Աստծուն։ Ամե՛ն։

Իվան Վալենտինովիչ

ՍՈՒՍԱՆ ՔՐՈՋ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Տարիներ առաջ ես Աստծուն ճանաչում էի մոմ վառելով, մատաղ անելով... Հավատացյալ հարազատներ ունեի՝ հիսունական, առաքելական, բայց չէի ընդունում նրանց: Ամեն անգամ հանդիպելիս հրավիրում էին եկեղեցի, բայց ինձ համար խորթ էր նրանց հավատքը:

Հորս մահից որոշ ժամանակ անց հավատացյալ հարազատներիցս մեկը՝ հորեղբորս հարսը, երազ է տեսնում, երազում հայրս նրան ասում է. «Աղջիկս խավարի մեջ է, օգնե՛ք՝ դուրս գա այդ խավարից»: Ես էլի չընդունեցի. մտածեցի՝ ուզում են իրենց հավատքին տանել: Անցան ամիսներ: Հավաքվել էինք հարազատներով. հորեղբորս հարսը մոտեցավ ինձ.

- Երազումս նորից հայրիկդ լացում էր քեզ համար:

Էլի չընդունեցի: Սիրտս քարացած էր:

Օրեր անցան: Մի օր առավոտյան կողքս սկսեց ցավել. նկատեցի մի փոքրիկ կարմիր բուշտ: Ուշադրություն չդարձրի, սովորականի նման գնացի աշխատանքի: Ժամեր անց զգացի՝ ցավը շատանում է: Նայեցի. բավականին մեծացել էր՝ հիսուն դրամանոցի չափ: Ցավը ինձ ստիպում էր կռանալ: Տուն գնացի: Մի կերպ բարձրացա երկրորդ հարկ: Արդեն շատ վատ էի զգում: Նորից ստուգեցի այտուցը. ավելի էր մեծացել՝ արդեն մոտ լորի ձվի չափ: Ինձ տարան բժշկի: Մտածեցին՝ ալերգիա է, դեղ տվեցին, եկա տուն: Գիշերը մի կերպ լուսացրի: Առավոտ տեսնում եմ՝ այտուցը բռունցքիցս մեծ է: Գույնը ավելի մգացած՝ կարմիր: Ինձ տարան հանրապետական հիվանդանոց: Բժիշկը նայեց, ուռուցքի չափերը տեսնելով՝ զայրացավ.

- Տիկի՛ն, ինչո՞ւ եք այսքան ուշացրել:

- Սա երեկ է նկատվել. շատ փոքր էր:

- Ինչպե՞ս կարող է մեկ օրում այսքան մեծանալ,- չհավատաց բժիշկը:

Կտրվածք արեցին, հեղուկ թափվեց: Բժիշկն ասաց.

- Այնպիսի մեծ խոռոչ է բացվել, որ բռունցքս կտեղավորվի. սա մեկ օրվա բան չէ, մեկ օրում չէր կարող այսպես քայքայել մկաններդ:

Խոռոչը մաքրեցին, ինձ ուղարկեցին տուն՝ վերքը մշակելու համար ամեն օր հիվանդանոց գնալու պայմանով: Մի կերպ հասցրին տուն: Քայլել անգամ չէի կարողանում: Օրեր անց՝ վերքը արդեն չորանալուն մոտ, նկատեցի կողքից նորից նույնը՝ փոքրիկ կարմիր բուշտ, ինչպիսին նկատել էի առաջին անգամ: Ցույց տվեցի բժշկիս, ասացի՝ առաջինն էլ այսպես սկսվեց ու մեկ օրում հասավ բռունցքի մեծության: Բժիշկս էլի չհավատաց. «Գործիքով մի փոքր վնասել են, ոչինչ չկա»,- ասաց: Ինձ տուն տարան, և ամեն բան կրկնվեց: Հաջորդ օրը գնացինք հիվանդանոց. բժիշկս ապշեց, երբ տեսավ մեկ օրում բռունցքի մեծության հասած ուռուցքը: Նորից կտրեցին, մաքրեցին: Գնացի տուն ու ամեն օր էլի հիվանդանոց՝ այս նոր խոռոչը մշակելու, վիրակապելու: Հեռու-մոտիկ հարազատներս սկսեցին շատ հաճախ գալ այցելության, բայց մտքովս ոչ մի վատ բան չէր անցնում: Մի օր էլ մորաքույրս էր եկել Ապարանից, լացելով մորս ասում էր՝ էս ի՞նչ ցավ եկավ, Անժի՛կ, ջան, քաղցկեղ է, հա՞: Ու լաց են լինում երկուսով: Նրանք չգիտեին, որ ես լսում էի՝ ննջարանում պառկած: Ինչ կատարվեց ինձ հետ՝ չեմ կարող նկարագրել: Աչքիս առաջ միայն երեխաներս էին: Այդ գիշեր ջերմությունս շատ բարձրացավ: Հետո երրորդ բուշտն առաջացավ: Գնացինք հիվանդանոց: Բժիշկս ինձ ուղարկեց ուռուցքաբանական: Տուն վերադարձի ճանապարհին հանդիպեցինք հորեղբորս աղջիկներին. հավաքույթի էին գնում: Երբ իմացան, որ ինձ ուղարկել են ուռուցքաբանական, ասացին.

- Մեր հանդիպումը պատահական չէ. մենք երբեք ուշացած չենք գնում հավաքույթի, բայց այսօր այսպես դասավորվեց քեզ համար. էլ տուն չես գնա, գնում ենք հավաքույթի:

Գնացինք, ներս մտանք. բոլորը աղոթում էին: Չգիտեմ ինչպես՝ ծնկի իջա ու միայն լաց էի լինում. ո՛չ աղոթք էի անում, ո՛չ ինչ-որ բան խնդրում, ո՛չ ինչ-որ բան լսում, միայն լաց էի լինում, իսկ արցունքներս հեղեղի պես հորդում էին: Բայց ձախ ականջիս տակ զգում էի մեկի շնչառությունը: Այնքան մոտ էր, որ անգամ նրա ջերմությունն էի

զգում: Կողքս շատ ուժեղ տաքացել էր, կարծես կրակ էր վառվում: Աղոթքը ավարտվեց: Վերջում հովիվը աղոթեց ու ասաց.

- Տիրոջ ներկայությունը այնքա՛ն հզոր էր. այստեղ բժշկություն եղավ:

-Սուսա՛ն, դու հավատքով ընդունի՛ր այդ բժշկությունը. դա քեզ համար է, քո բժշկությունն է,- ասաց ինձ հորեղբորս աղջիկը:

Երբ սենյակից դուրս էինք գալիս, հովիվն ուսիս թփթփացրեց.

-Գնա՛, քույրի՛կ ջան, մինչև հասնես տուն՝ բժշկված ես:

Դուրս եկանք, ուզեցին եղբորս կանչել, որ տուն տանի. գիտեին՝ քայլել չէի կարողանում, կռացած էի, թեքված մի կողքիս: Ասացի՝ մի՛ կանչեք, ես քայլել եմ ուզում: Մոտ երկու կանգառ պիտի քայլեի: Ճանապարհին մտա վարսավիրանոց՝ ուղղակի տեսնելու աշխատողներին: Կողքս այրվում էր: Նայեցի, տեսնեմ՝ ուռուցքը բացվել է, ու արտադրությունը հոսում է: Կողքի պոլիկլինիկայից եկավ մյուս հորեղբորս աղջիկը, մաքրեց, վիրակապեց: Հասա տուն, իմ ոտքով հանգիստ բարձրացա երկրորդ հարկ ու է՛լ բժշկի չգնացի: Աստված ինձ բժշկեց ու մինչև հիմա Աստծուս հետ եմ: Փառք Տիրոջը: Ամե՛ն:

17-ամյա դպրոցականի երազը

Գտնվելով քնի և արթնության միջև՝ ես հայտնվեցի մի սենյակում, որտեղ ոչ մի տեսանելի ուրվագծեր չկային, բացի մի պատից, որի վրա դասավորված էին փոքրիկ արկղեր՝ նախատեսված հաշվառման քարտերի համար: Դրանք նման էին գրադարանների դարակների, որոնց վրա այբբենական կարգով դասավորված են ցուցակները՝ հեղինակի անունով կամ ըստ թեմայի: Բայց այդ արխիվային արկղերը, որոնք զբաղեցնում էին ամբողջ պատը՝ հատակից մինչև առաստաղ, որքանով տեսանելի էին աչքին, բոլորովին այլ վերնագրեր ունեին:

Երբ մոտեցա պատին, առա-

ջինն ուշադրությունս գրավեց սա. «Մարդիկ, որոնք ինձ դուր են գալիս»: Ես բացեցի այն, և երբ սկսեցի նայել քարտերը, իսկույն վախեցած փակեցի: Այդ պահին ես հասկացա, որ այդ բոլոր անուններն ինձ ծանոթ են և առանց որևէ բառի հասկացա, թե որտեղ եմ գտնվում: Այդ փոքրիկ արկղերով անշունչ սենյակն իմ ամբողջ կյանքի հավաստի փաստերի մատյանն էր: Այնտեղ գրված էին իմ կյանքի բոլոր գործողությունները, բոլոր կարևոր և անկարևոր պահերը: Դրանք այնքան մանրամասն էին, որ ինքս դժվարանում էի հիշել: Վախի հետ խառնված՝ հետաքրքրասիրությունը ստիպեց ինձ, որ բացեմ բոլոր արկղերը: Դրանցից որոշներն ուրախություն և հաճելի հիշողություններ էին արթնացնում, որոշներն՝ այնքան ուժեղ ամոթի զգացողություն, որ նույնիսկ հետ էի նայում՝ համոզվելու, որ ինձանից բացի ոչ ոք չկա այնտեղ:

«Ընկերներ» կոչվող արկղի կողքին գտնվում էր «Ընկերներ, որոնց դավաճանել եմ» անունով արկղը: Եվ այդպես շատ սովորական և անսովոր անվանումներով արկղեր կային գրված: Դրանք վերաբերում էին իմ կարդացած գրքերին, հումորներին, որոնց վրա ծիծաղում էի, ստերին, որոնք հորինել էի, իմ բոլոր մեղքերին, ասածս ցանկացած բառին: Ես ապշած էի, քանի որ չէի հավատում, որ 17 տարեկանում այսքան շատ ժամանակ եմ ունեցել և այսքան շատ քարտեր կուտակել, բայց ամեն քարտը գրված էր իմ ձեռագրով, և բոլորի վրա իմ ստորագրությունը կար:

Երբ վերցրի «Երգեր, որոնք ես լսել եմ» արկղը, տեսա, որ այն երկարացրած էր ամբողջը տեղավորելու համար: Քարտերը շատ խիտ էին դասավորված, և երկու-երեք մետր հետո նույնիսկ չէր երևում դրանց վերջը: Ես հետ դրեցի այն՝ ամաչելով ո՛չ թե իմ լսած երաժշտության որակի համար, այլ՝ դրա վրա ծախսած այդքան շատ ժամանակի և արխիվում զբաղեցրած տեղի համար: Այնուհետև ես գտա իմ մտքերի և ցանկությունների մասին արկղը: Արագ հանեցի քարտերը և, տեսնելով դրանց բովանդակությունը, քարացա: Ես ընկճվեցի, զայրացա, ու միակ միտքը, որ ունեցա այդ պահին՝ այն էր, որ ոչ ոք, ոչ մի դեպքում չպետք է տեսնի այս քարտերը: Ես ցանկացա այրել դրանք, բայց ոչինչ չստացվեց, որովհետև դրանք պողպատից էլ ամուր էին:

Տեսնելով, որ անօգուտ է՝ ես արկղն իր տեղը դրեցի և

անօգնական մնացի կանգնած, երբ հանկարծ նկատեցի մի արկղ, որի վրա գրված էր. «Մարդիկ, որոնց հետ խոսել եմ Ավետարանի մասին»: Դրա բըռնակը իր փայլով տարբերվում էր մնացածից: Այն բոլորովին նոր տեսք ուներ: Երբ քաշեցի, 7 սանտիմետրից ոչ ավելի երկարությամբ արկղն ընկավ ձեռքերիս մեջ: Ես մեկ ձեռքիս մատներով կարող էի հաշվել դրա միջի քարտերը: Եվ այդ պահին ես ընկա ծնկներիս վրա և սկսեցի արտասվել: Ես մտածեցի. «Ոչ ոք երբեք չպետք է իմանա այս սենյակի մասին: Ես պետք է կողպեմ այն և բանալին թաքցնեմ»: Հետո արցունքների միջից տեսա, թե՛ ինչպես սենյակ մտավ Նա. «Ո՛չ, խնդրում եմ, միայն ո՛չ Նա: Ով ուզում է՝ թող գա, միայն ո՛չ Հիսուսը»: Ես անօգնական նայում էի, թե ինչպես էր Նա բացում արկղերը և կարդում քարտերի վրա գրվածները: Նայելով նրա հայացքին՝ ես տեսնում էի խորը թախիծ, որից սիրտս կոտրվում էր: Թվում էր, թե Նա վերցնում էր ամենավատ արկղերը: Ինչո՞ւ էր Նա դրանք կարդում: Վերջապես Նա շրջվեց, ափսոսանքով նայեց իմ աչքերին: Ես գլուխս կախեցի և սկսեցի նորից արտասվել: Նա մոտեցավ ու գրկեց ինձ: Այդ պահին Նա այնքան շատ բան կարող էր ասել, բայց սկսեց լաց լինել ինձ հետ միասին: Հետո նորից մոտեցավ պատին և սկսեց բոլոր քարտերի վրա ստորագրել իմ ստորագրության վերևում: Ես բղավում էի, և միակ՝ բառը, որ կարողանում էի ասել՝ «ոչ»-ն էր: Ես փորձում էի վերցնել քարտերը Նրա ձեռքից: Նրա անունը չպետք է գրվեր այդ քարտերի վրա: Նրա ստորագրությունը վառ կարմիր գույնով էր: Նրա անունը ծածկում էր իմ անունը: Այն կենդանի էր, գրված էր արյունով:

Նա նրբորեն վերցրեց քարտը, ժպտաց և շարունակեց ստորագրել: Ես չհասկացա, թե ինչպես այդքան արագ վերջացրեց, բայց ինձ թվաց, որ հենց հաջորդ պահին ես նկատեցի, թե ինչպես փակեց վերջին արկղը և մոտեցավ ինձ, ձեռքը դրեց ուսիս և ասաց. «Կատարվեց»:

Ես կանգնեցի, և Նա ինձ դուրս հանեց սենյակից: Դռան վրա կողպեք չկար, բայց շատ քարտեր կային, որոնք դեռ պետք է գրվեին...

Երազի մասին այս գրությունը գտնվել է 17-ամյա դպրոցական տղայի մոտ՝ այն բանից հետո, երբ իր մոտոցիկլետով վթարի է ենթարկվել և մահացել:

Բժշկության եզրահանգումը

Պատմում է բժիշկը. «Վերակենդանացումը թույլ է տվել բժիշկ-գիտնականներին՝ բացել «գաղտնի» մահվան վարագույրը և տեսնել ավելին, քան հնարավոր է եղել տեսնել մինչ օրս: Պարզվում է՝ մարմնի մահը դեռ անձնավորության վերջը չէ: Մարդու ինչ-որ մի «մաս» թողնում է մեռած մարմինը և շարունակում է ապրել «նոր պայմաններում»: Կլինիկական մահից վերադարձած մարդիկ պատմում են, որ իրենք ամեն ինչ հիշում են: Նրանք բոլորն էլ կարողանում են ազատ խոսել, կողմնորոշվել: Մարդիկ ֆիզիկական մահից հետո հոգեկան որևէ խնդիրներ չեն ունենում: Սա շատ կարևոր փաստ է, որը հաստատում է, որ ուղեղը մահանում է, բայց մարդիկ չեն դադարում ապրել: Մարմին վերադառնալուց հետո մարդիկ պատմում էին այն, ինչ տեսել էին, և այնպիսի մանրամասնությամբ, որ բժիշկները չէին կարող չհավատալ: Պատմում էին, թե մի քանի սենյակ այն կողմ ինչ են արել այս կամ այն բժիշկը, քույրը, հիվանդները, կամ ինչ են խոսել: Նրանք հիշում էին ամենը, ինչ որ կատարվել էր իրենց հետ: Բայց նույն այդ ժամանակահատվածում գլխուղեղը կյանքի ոչ մի նշան ցույց չի տալիս. նա մեռած է: Ուստի մենք պետք է իմանանք, որ գլխուղեղը միայն կենսաբանական համակարգիչ է, որի վրա աշխատում է հոգին: Հենց այդ աշխատանքը շատ բանով պայմանավորված է համակարգչի հզորությամբ, այսինքն՝ գլխուղեղի զարգացածության աստիճանով, հնարավորություններով և Աստծու Հոգու պարգևներով»:

www.barilur.org
info@barilur.org